

Ան ատեն երաժիշտք եւ կաթաւ դադրեցան, լոյսերն սկսան խաւարիլ, եւ չորս մաքուր սպասաւորք ամենայն գոլուշութեամբ իւր բազմոցով իրեն համար պատրաստուած անկողինը տարին զարթայորդին:

Երբ Թումայ, Փիլակրիոս եւ Վաղենտինոս՝ որ սորայ զինակիրն էր՝ գեղեցիկ երիտասարդ մը՝ մինակ մնացին, Անկելինայ ոտք ելաւ եւ գոհ ու գոռոզ ակնարկ մը ձգելով ըսաւ Թումայի.

– Յիմա՛ր, կ'իմանա՞ս հիմա թէ ինչչա՛փ սրամիտ եւ հեռատես եմ:

Եւ երեքին հաւասարապէս՝

– Դուք միայն ոսկի դիզել եւ ձեր անարդ կիրքերը յագեցնել գիտէք, իսկ ես վաղն ել կը մտածեմ եւ կը հոգամ:

Փիլակրիոս ամենեւին ձայն չի հանեց, իսկ Թումայ իր քոյրն մէկդի առնելով եւ իր սովորաան ծիծաղով հծծելով, ըսաւ.

– Միթէ՞ կայսրը մահուան դատապարտուած է, որ թագաժառանգը այսչափ նախահոգութեամբ կը մեծարես:

– Ո՞վ է անմահ, յիմա՛ր:

– Մեր անարգ կիրքերը, որ կ'ամբաստանես, իրաւունք ունիս, իսկ Վաղենտինոսի համար քու զգացածդ ինչ աստիճանի ազնիւ է, իմ առաքինի եւ սիրուն բուրիկս...

Յարցուց Թումայ ծիծաղելով, բայց շուտ մը ետ քաշուեցաւ, վասնզի նկատեց, որ իւր առաքինի բուրիկը իրեն լաւ ապտակ մը կը պատրաստէր:

Այդ փառասեր եւ իշխանութեան փափագող կինը, որ Յուստինիանոսի Թեոդորա կայսրուհին միայն կը յիշէր եւ նորա վիճակը կ'երեւակայէր ու այդ ապագան պատրաստելու համար կ'աշխատէր, տեսնենք թէ ինչչափ յաջողեցաւ...

Պարահանդեսին վրայ մէկ-երկու շաբաթ անցաւ, Չաւեն ամեն օր կ'երթար յարմար նաւ մը նայելու, եւ առաւօտները կը սպասէր իր Արփենին տեսնել: Ուրախութեամբ կը նկատէր աղջկան վրայ զգալի փոփոխութիւն մը, երրորդ եւ չորրորդ տեսութեան իւր հայերէնը բոլորովին գտած էր եւ իր վրայ